Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Քասախի Ա.Հովհաննիսյանի անվան №2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի /17 դասաժամ/, քիմիայի /9 դասաժամ/, պատմության /22 դասաժամ/, աշխարհագրության /15 դասաժամ/, ֆիզիկայի /՝13 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրուցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3×4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (Ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են մարտի 9-ից մինչև մարտի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա մարտի 24-ին՝ ժամը՝ 14:00-ին Քասախի Ա. Հովհաննիսյանի անվան №2 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ գ. Քասախ, Տերյան փողոց շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 19 60 13 հեռախոսահամարին: